Երկրորդ ընթերցում

Կ-442[25]-25.11.2022-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մասին» 2004 թվականի մարտի 31-ի ՀՕ-60-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 6. Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների ղեկավարումը**

1. Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումները գործում են Փրկարար ծառայության կազմում:

2. Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների ղեկավարումն իրականացնում է Փրկարար ծառայության տնօրենը:»:

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածում, 8-րդ հոդվածի 5-րդ պարբերությունում, 11-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ և 17-րդ հոդվածներում «լիազորված» բառը փոխարինել «Լիազոր» բառով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում Փրկարար ծառայության կանոնադրությունը ուժի մեջ մտնելու օրվանից: